Ք.Երևան 29.12.2025թ.

,,ՍԳԿԿ,, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Արման Տոնոյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ Լուսինե Սարգսյանի, Արմենակ Ադամյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով ըստ Վարդգես Սաղոյանի դիմում-բողոքի, /այսուհետ՝ դիմումատու/ Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ՝ Արման Տոնոյանի /այսուհետ՝ կառավարիչ/ նկատմամբ, կարգապահական վարույթ հարուցելու և նրա նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին պարզեց, դիմումատուի կողմից դիմում է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարար՝ Սրբուհի Գալյանի անվամբ:Նշված դիմում-բողոքը ՀՀ արդարադատության նախարարության, վերահսկողական վարչության, երկրորդ բաժնի պետ՝ Նարինե Խալաթյանի 07.07.2025թ.-ի թիվ 28.2/30095-2025 գրությամբ ուղղված ,,ՍԳԿԿ,,ԻԿ տնօրեն՝ Ա.Ելինյանին:

Նշված բողոքը տրամադրվել է հանձնաժողովին և ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ին ներկայացված դիմումի պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի ,,3,,-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 2025թ.-ի մայիսի 10-ին, 2025թ.-ի հունիսի 6-ին և 2025թ.-ի հուլիսի 25-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

2025թ.-ի հուլիսի 25-ին նշանակված նիստին, հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով, նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Նախ Ա.Սարգսյանը հայտնեց, որ դիմումի սկանավորված տարբերակը ուղարկվել են հանձնաժողովի բոլոր անդամներին և կառավարչին և նրանք ծանոթացել են այդ դիմումին:Միաժամանակ Ա.Սարգսյանը հայտնեց, որ դիմում բողոքի քննարկմանը ներկայացել են ինչպես կառավարիչը այնպես էլ դիմումատուն:Այնուհետև Ա.Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը, նախ լսել դիմումատուին, հարցերի դեպքում դրանք ուղղել նրան, այնուհետև լսել կառավարչի առարկությունները, այնուհետև հարցերի դեպքում դրանք ուղղել կառավարչին, իսկ այնուհետև հանձնաժողովը անցնի կարծիքների արտահայտմանը և այդ կարծիքներից ելնելով, կայացնել որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից, նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Դիմումատուն իր դիմումով նշել է, որ Երևանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/17784/02/18 քաղաքացիական գործով 07.02.2019թ. կայացվել է վճիռ, որով իր՝ գումարի բռնագանձման պահանջի մասին հայցն ընդդեմ Աննա Քիշմիրյանի բավարարվել է եւ դատարանը վճռել է Աննա Քիշմիրյանից հօգուտ իրեն բռնագանձել 5000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ինչպես նաև 50000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, 40000 դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, և 5000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկել եւ բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով սահմանված բանկային տոկոսները՝ սկսած 26.06.2018թ. մինչև պարտավորության կատարման օրը:

Իր կողմից դիմում է ներկայացվել ՀՀ սնանկության դատարան՝ Աննա Քիշմիրյանին սնանկ ճանաչելու պահանջով և ՀՀ սնանկության դատարանի կողմից թիվ ՍԴ/2273/04/20 սնանկության գործով 22.10.2020թ կայացված վճռով դիմումը բավարարվել է և Աննա Քիշմիրյանը ճանաչվել է սնանկ:

Դատարանի 23.11.2020թ. կայացված որոշմամբ Արման Տոնոյանը նշանակվել է սնանկության կառավարիչ:

Ըստ դիմումատուի, սնանկության կառավարիչ նշանակվելու օրվանից մինչև դիմումը ներկայացնելու պահը, Արման Տոնոյանը ոչ մի պատշաճ գործողություն չի կատարել, վճռի պահանջը կատարելու և գումարը բռնագանձելու ուղղությամբ, չնայած ունեցել է դրա համար անհրաժեշտ բոլոր հնարավորություններն ու իրավասությունները:

Այսպես՝ սնանկության գործընթացի անցկացման ժամանակ հայտնի է դարձել, որ Աննա Քիշմիրյանին համատեղ սեփականության իրավունքով բաժնեմասով պատկանում է Գեղարքունիքի մարզի Վարդենի համայնքի տարածքում գտնվող տնամերձ հողատարածք, որը «Արաքսոիելթի> ՍՊԸ-ի կողմից գնահատվե է 2.050.000 (երկու միլիոն հիսուն հազար/ ՀՀ դրամ փորձագետին դիմել եմ ես սեփական նախաձեռնությամբ/: Ըստ դիմումատուի, կառավարիչն ի պաշտոնե ուներ լիազորություն այդ գույքը աճուրդով վաճառելու և գումարի վրա բռնագանձում տարածելու հայց ներկայացնել դատարան, ապա վճռի կայացնելուց հետո, գույքը հաներ վաճառքի: Սակայն, ըստ դիմումատուի, նա ոչինչ չի արել:

Իր դիմումով դիմումատուն հայտնել է, որ Աննա Սերյոժայի Քիշմիրյանի և Տիգրան Պետրոսի Աշխարյանի միջև 20.06.2018թ. կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրով Աննա Քիշմիրյանը 8.000.000 /ութ միլիոն/ ՀՀ դրամով վաճառել է իրեն պատկանող ք. Երևան, Ռոստոմի փող., 51/2 հասցեում գտնվող անշարժ գույքը: Այնինչ, այդ նույն անշարժ գույքը Աննա Քիշմիրյանը պայմանագրի կնքումից մի քանի ամիս առաջ իրեն է փորձել վաճառել դրա շուկայական արեք կազմող 22.000 /քսաներկու հազար/ ԱՄՆ դոլարով, որը դրամի վերածելով կազմում 10.560.000 /տաս միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ /դոլարի կուրսը հաշվարկվել է գործարք կնքման ժամանակվա նվազագույն կուրսով՝ 480 դրամ/: Այսինքն, հաշված ամիսների ընթացքում անշարժ գույքի շուկայական արժեքը 2.560.000 /երկու միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամով էժանացել է, ինչը անհիմն է, որը հաստատվում է իր և Աննա Քիշմիրյանի միջև քննված թիվ ԵԴ/17784/02/ քաղաքացիական գործով 07.02.2019թ. կայացրած վճռով, որտեղ պատասխանող Աննա Քիշմիրյանը գույքի արժեքի վերաբերյալ որեւէ առարկություն չի ներկայացրել:

Ըստ դիմումատուի, տվյալ դեպքում սնանկության կառավարիչը չի իրականացրել „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 54 հոդվածի 1-ին մասի „դ„ ենթակետի պահանջը, կառավարչին վերապահված իրավունքները: Սակայն այս տարիների ընթացքում նման գործողություն ևս չի կատարվել, հայց չի ներկայացվել դատարան **գործարքը անվավեր ճանաչելու պահանջով**: Իր բոլոր բանավոր պահանջները՝ վճիռը կատարելու մասին, մնացել են անհետևանք: Ըստ դիմումատուի ներկայումս էլ լրացել է վերոնշյալ հոդվածի հիմքով հայց ներկայացնելու ժամկետը, ինչը նշանակում է, որ այլևս այդ հայցով դատարան դիմելն անհնար է, հայցը կմերժվի ժամկետները լրանալու հիմքով:

Դիմումատուն հայտնել է նաև որ, փաստաբանը, իր խնդրանքով պատրաստել է հայցադիմում վերոնշյալ պահանջով, որը ինքը տրամադրել է Տոնոյանին և խնդրել հայցը ներկայացնել դատարան, քանի որ ըստ օրենքի այդ հայցը կարող է ներկայացնել միայն սնանկության գործով կառավարիչը: Սակայն Տոնոյանը նույնիսկ դա չի կատարել եւ պատրաստի հայցադիմումը չի ստորագրել ու դատարան ուղարկել, որպեսզի հնարավոր լիներ պարտապան Քիշմիրյանի գույքը հետ վերադարձնել եւ դրա վրա բռագանձում տարածել:

Դիմումտուն հայտնել է նաև, որ Աննա Քիշմիրյանը հանդիսանում է Վարդենիսում գտնվող հողամասի համասեփականատեր, նրա հոր մահից հետո ինքը ժառանգություն չի ընդունում, որպեսզի գույքում իր բաժնեմասը մեծ չլինի եւ որ դիմումատուն չկարողանա օրենքով սահմանված կարգով աճուրդի հանի այդ գույքը, քանի որ սեփականության վկայականում կա մահացած մարդ եւ մինչ գույքը վաճառելը, անհրաժեշտ է հանգուցյալի մասնաբաժինը փոխանցել ժառանգին: Ըստ դիմումատուի, Տոնոյանը ձևական հարցում է արել գյուղապետարան, իբր պարզելու՝ այն ժառանգության ընդունման հարցը, սակայն արդեն 4 ամսից ավել է անցել, իսկ պատասխան այդ դիմումին չկա:Ըստ դիմումատուի Տոնոյանը չի հետևում, որ իր հարցմանը պատասխան տրվի, ինչը դիմումատուի մոտ կասկած է առաջացրել, որ կառավարիչը ընդհանրապես հարցում չի արել և հերթական սուտն է հորինում դիմումատուի գործը ձգձգելու համար:

Դիմումատուն մատնանշել է „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջները և նշել է, որ սնանկության կառավարիչ Արման Տոնոյանը դիտավորյալ չի կատարել օրենքով իրեն

վերապահված լիազորությունները, պատշաճ միջոցներ չի ձեռնարկել դատական ակտի պահանջը կատարելու համար, ինչի պատճառով իրեն պատճառվել է գույքային վնաս, որն ըստ վերոնշյալ հոդվածի ենթակա է բռնագանձման հենց Ա. Տոնոյանից:

Ըստ դիմումատուի սնանկության կառավարիչ Արման Տոնոյանը խախտել է „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունները, մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասի „բ„„ դ„„ ժբ„„ ենթակետերը:

Իր դիմումով դիմումատուն հայտնել է, որ ինքը արդեն բազմիցս բարձրաձայնել է Արման Տոնոյանի կողմից իր պարտականությունները չկատարելու և ինձ նյութական վնաս պատճառելու մասին և իր բողոքի հիման վրա, սնանկության կառավարիչների կոլեգիայում 2024 թ-ին կայացվել է որոշում նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, ինչի արդյունքում նա կարգապահական տույժ է ստացել: Սակայն դրանից հետո էլ մինչ օրս որեւէ բան չի փոխվել, Տոնոյանը շարունակել է անգործություն ցուցաբերել, կանխամտածված դիտավորյալ գործ չի արել, իրեն համար անհասկանալի պատճառներով դարձել է Աննա Քիշմիրյանի շահերի պաշտպանը եւ օրենքով իր լիազորությունները կատարելու փոխարեն, կառավարիչը ներկայումս օգնում է Աննային գումարը վերադարձնելից խուսափելու հարցում:

Դիմումատուն մատնաշել է „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.2 հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի և 3-րդ մասի պահանջները և իր կողմից նշվածից ակնհայտ է, որ կան օրենքով սահմանված բոլոր հիմքերը սնանկության կառավարիչ Արման Տոնոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Հրավիրված նիստին բանավոր կերպով դիմումատուն պնդեց իր դիմումը ամբողջությամբ, մասնավորեցնելով դիմումի մեջ նշված հանգամանքները:

Դիմումատուի կողմից իր դիմումում նշված հանգամանքները բանավոր կերպով ներկայացնելու ընթացքում, վերջինս անդրադարձավ „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի պահանջներին, որի կատարման մասով, հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը հետաքրքրվեց թե այդ հոդվածի կատարման մասով, որ չկատարված քայլն է դիմումատուն նշում որպես կառավարիչի կողմից կատարված խախտում, որին ի պատասխան դիմումատուն հայտնեց, որ կառավարիչը պետք է հայցով մտներ դատարան /այդ հայցը նույնիսկ պատրաստվել է իր կամ իր փաստաբանի կողմից/Աննա Սերյոժայի Քիշմիրյանի եւ Տիգրան Պետրոսի Աշխարյանի միջև 20.06.2018թ. կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջով, չնայած նրան, որ նշված գործարքը հենված է ոչ թե նվիրատվության այլ նշված գործարքը եղել է գումարային գործարք:Դիմումատուն մանրամասնեցրեց նաև այդ հացադիմումի գրելու կամ չգրելու հանգամանքները, այսինքն մեկը մյուսին հայցը փոխանցելու, վիճարկվող գույքի գնահատման հանգամանքները:Սակայն դիմում բողոքը բանավոր ներկայացնելու ընթացքում էլ, դիմումատուի կողմից նշվեց, որ 54-րդ հոդվածով նրա կողմից այդ գործողությունները չեն կատարվել:Միաժամանակ բանավոր կերպով դիմումատուն նշեց, որ կառավարչի կողմից դիմումատու պարտատիրոջը կատարվել է զանգ, որով վերջինս հայտնել է, որ պարտապան Աննա Սերյոժայի Քիշմիրյանը ունեցել է երեխա, որի համար նրան տրամադրել են 100000 ՀՀ դրամ և վերջինս հայտնել է, որ այդ գումարը պետք է վերցնի պարտապանին և հանձնի պարտատիրոջը, կոնկրետ դեպքում իրեն՝ դիմումատուին:Ըստ դիմումատուի 100000 ՀՀ դրամը տարբեր պատճառաբանություններով դառնում է 60000 ՀՀ դրամ, որից 20000 ՀՀ դրամ գումարը նա ստանում է կառավարիչի ընկերոջից:Իսկ այնուհետև կառավարիչը փոխանցում է 19700 ՀՀ դրամ:Հատկանշական է այն հանգամանքը, որ նշված հանգամանքը ընդունվեց կառավարչի կողմից և դեռ ավելին՝ հայտնեց, որ այդ գումարը նա տվել է իր գրպանից:

<u>Միաժամանակ դիմումատուն նշեց, որ նախկինում եւ մեկ անգամ ներկայացրել է դիմում բողոք և նախկին հանձնաժողովի կողմից կիրառվել է տույժ և այդ տույժից հետո էլ կառավարիչը ոչ մի գործողություն չի կատարել:Նախկին բողոք դիմումում էլ խոսքը վերաբերվել է ոչ միայն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված խախտումներին, այլ վերաբերվել է նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում գտնվող, պարտապանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի հետ կապված գործողությունների չկատարմանը:</u>

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Տոնոյանի կողմից ներկայացված պատասխանով վերջինս հայտնեց, որ ՀՀ Սնանկության դատարանի 22.10.2020թ. թիվ ՍՆԴ/2273/04/20 վճռով Աննա Սերյոժայի Քիշմիրյանը (հասցե՝ ք, Երեւան, Քաջազնունու10շ., բն. 15, անձնագիր՝ AH 0410382, 043-ի կողմից) ճանաչվել է սնանկ: ՀՀ Սնանկության դատարանի 23.11.2020թ. որոշմամբ նշանակվել է Աննա Սերյոժայի Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ:

Կառավարչի կողմից նշված առարկությամբ վերջինս հայտնել է, որ կատարել է համապատասխան հարցումներ պետական մարմիններին՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը եւ ստացված պատասխան-գրություններից պարզվել է, որ պարտապանի անվամբ իրենց բազայում որևէ գույք գրանցված չէ:Բացի այդ, նա կատարել է հարցում ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանմանը եւ համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման կողմից տրված գրության հայտնվել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնք (անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական 912035) թիվ 05-085-0020-0004 կադաստրային ծածկագրով 0.226 հա հողամասի նկատմամբ գրանցված է Աննա Սերյոժայի Քիշմիրյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը եւ ՀՀ տարածքում նախորդ հինգ տարիների ընթացքում Աննա Սերյոժայի Քիշմիրյանի կողմից կատարվել է օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ք. Երեւան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 51/2 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

Ըստ ներկայացված առարկության Իր կողմից հրավիրվել է անկախ գնահատող եւ «Էքսպրես Օցենկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվության համաձայն ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնք (անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական 912035) թիվ 05-0850020-0004 կադաստրային ծածկագրով 0.226հա հողամասի շուկայան արժեքը կազմում 3.000.000 ՀՀ դրամ:Ըստ կառավարչի կողմից տրված առարկությունների նշված գույքը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Աննա Սերյոժայի Քիշմիրյանին եւ Սերյոժա Խաչիկի Քիշմիրյանին, որը մահացել է: Աննա Սերյոժայի Քիշմիրյանը հանդիսանում է Սերյոժա Խաչիկի Քիշմիրյանի դուստրը, սակայն մինչ օրս դեռ չի ժառանգել Սերյոժա Խաչիկի Քիշմիրյանին պատկանող վերը նշված հողատարածքը:Կառավարիչը իր առարկություններում նշել է նաև, որ ստացել է Աննա Սերյոժայի Քիշմիրյանի, Լեւոն Սերյոժայի Քիշմիրյանի եւ Լալա Իլիչի Սեւոյանի կողմից ուղարկված գրությունները, որի համաձայն վերջիններս մինչ օրս նույնպես դեռ չեն ժառանգել իրենց հասանելիք բաժինները, իսկ հանգուցյալի ժառանգական գործի վերաբերյալ՝ ժառանգական գործերի շտեմարանում գրառում չկա :Կառավարիչը ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56 հոդվածի 1-ին մասի պահանջով, ծանուցել է պարտատեր Վարդգես Արմենի Սաղոյանին եւ պարտապանին վերջինիս գույքի գույքագրման մասին:

Կառավարիչը իր առարկություններում նշել է նաև, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գույքի 1/2 բաժնեմասը դեռ ոչ ոք չի Ժառանգել, ուստի դեռ ինքը չի դիմել դատարան Աննա Սերյոժայի Քիշմիրյանի բաժինն առանձնացնելու համար:

Վարդգես Արմենի Սաղոյանի կողմից նշված այն հանգամանքին, որ Աննա Սերյոժայի Քիշմիրյանի եւ Տիգրան Պետրոսի Աշխարյանի միջեւ կնքվել է անշարժ գույքի վաճառքի պայմանագիր, որով Աննա Սերյոժայի Քիշմիրյանը 8.000.000 ՀՀ դրամով վաճառել է ք. Երեւան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 51/2 բնակելի տուն հասցեով անշարժ գույքը, սակայն Աննա Սերյոժայի Քիշմիրյանի եւ Տիգրան Պետրոսի Աշխարյանի միջեւ, անշարժ գույքի վաճառքի պայմանագրի կնքումց մի քանի ամիս առաջ իրեն են փորձել վաճառել նույն այդ գույքը 22.000 ԱՄՆ դոլարով, ուստի ըստ դիմումատուի նշված գույքը վաճառվել է ավելի ցածր արժեքով, կառավարիչը հայտնել է, որ պարտապանի կողմից գործարքը ձևական կնքելու եւ շուկայականից ցածր գնով վաճառելու մասին որևէ ապացույց չունի, ավելին՝ Վարդգես Արմենի Սաղոյանը նշում այն հանգամանքը, որ անշարժ գույքի վաճառքի պայմանագրի կնքմանից մի քանի ամիս առաջ իրեն են փորձել վաճառել նույն այդ գույքը 22.000 ԱՄՆ դոլարով, որը Վարդգես Արմենի Սաղոյանը չի գնել, իսկ պարտապանը դա վաճառվել է 8.000.000 ՀՀ դրամով, սակայն պարտապանի պնդմամբ Վարդգես Արմենի Սաղոյանը հրաժարվել է գույքը գնել 22.000 դոլարով, գնի բարձր լինելու պատճառով:

Կառավարչի կողմից ներկայացված բանավոր հայտարարությամբ կառավարիչը պնդեց իր կողմից իր առարկություններում նշված հանգամանքները ավելացնելով, որ վերջինս ջանք և եռանդ չի խնայել գործը օրենքով սահմանված կարգով վարելու համար:Կառավարչի կողմից ներկայացված առարկություններին վերաբերվող, կառավարչին հարց հղեց հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը հարց ուղղեց կառավարչին առ այն թե ինչու կառավարիչը չի իրականացրել դիմումում նշված՝ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված պահանջները, որին իր պատասխան, որ չունի օֆիցիալ գնահատման ակտ կամ գնահատողի կողմից տրված որևիցե մի փաստաթուղ վաճառված արժեքի ավել կամ պակաս վաճառելու մասին, սակայն ունեցել է

քննարկումներ գնահատողների հետ, որով պարզվել է, որ գործարքի արժեքի էական տարբերություններ չկան և այդ իսկ պատճառով էլ հայցադիմումի հիմք չի ունեցել:

Իր հայտարարությամբ կառավարիչը նշեց, որ պարտատերը իրեն՝ կառավարչին բանավոր կերպով հայտնել է, որ ինքը ներկայումս գտնվում է շատ վատ վիճակում և վերջինիս անհրաժեշտ են եղել գումարներ:Նշվածից ելնելով կառավարիչը ունեցել է բանավոր խոսակցություն պարտապանի հետ, մասնավորապես այն բնույթի, որ պետք է մարվի ամբողջ գումարը:Պարտապանը հայտնել է այն մասին, որ նման գումար, այն է՝ 3000000 ՀՀ դրամ վերջինս չունի, սակայն կարող է մի 100000 ՀՀ դրամի չափով գումար տրամադրել պարտատիրոջը, որը խնդրել է իրականացնել կառավարչի միջոցով, քանի որ վերջինս կռված է պարտատիրոջ հետ:Իսկ այնուհետև պարտապանը այդ գումարը չի տվել, այլ խնդրել է կառավարչի, որպեսզի ինքը տա 20000 ՀՀ դրամ պարտապանին և կառավարիչը համաձյնվել է և այն 20000 դրամի մասին, որը նշում էր դիմումատուն իր բանավոր հայտարարությամբ, այդ գումարը կառավարիչը վճարել է իր գրպանից:

Այնուհետև կառավարչին ուղղվեցին հարցեր, մասնավորապես՝ հարց ուղղվեց Լուսինե Սարգսյանի կողմից, որը հարցրեց թե արդյոք նախորդ կարգապահական հանձնաժողովի կողմից քննվել են այս հանձնաժողովում քննվող հարցերը, մասնավորապես՝ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված խախտումները և ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում գտնվող հողատարածքի բաժնեմասի առանձնացման կամ տիրազուրկ ճանաչելու հարցերը և քննարկման արդյունքում ինչ որոշում է կայացվել, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց որ չի հիշում և նշված հարցին պատասխանել չի կարող:

Այնուհետև կառավարչին հարց ուղղեց դիմումատուն, վերաբերվող այն հանգամանքին, որ կառավարչի կողմից նրան է վճարվել 40000 ՀՀ դրամ գումար, որից 20000 կառավարչի ընկերոջ միջոցով իսկ 19700 ՀՀ դրամ գումարը, հավանաբար պարտապանի քարտին փոխանցվել է կառավարիչի կողմից, որը ըստ կառավարչի պետք է նա վերցներ պարտապանից, սակայն վճարվել է իր գրպանից:Նշված հարցի վերաբերյալ կառավարիչը հայտնեց, որ զրուցել է պարտապանի հետ և նրան առաջարկել է մարել ամբողջ՝ 3000000 ՀՀ դրամի չափով պարտավորությունը, որին ի պատասխան պարտապանը հայտնել է, որ նման գումար վերջինս չունի և կարող է միայն տալ 100000 ՀՀ դրամ:Կառավարիչը հայտնել է, որ գոնե այդքան գումարը թող տա պարտատիրոջը, որին ի պատասխան պարտապանը խնդրել է, որ այդ գումարը փոխանցի պարտապանին կառավարիչը, իսկ այնուհետև ինչ ինչ պայմաններից ելնելով 20000 ՀՀ դրամի չափով գումար կառավարիչը տվել է պարտատիրոջը, պարտատապանի փոխարեն:

Կառավարչին կրկին անգամ հարց ուղղեց պարտապանը, որը հարցրեց, թե վերջ ի վերջո, նույնիսկ իր փաստաբանի միջոցով կազմված կամ իր կողմից կազմված հայցադիմումով, ինչու կառավարիչը չի մտել 54-րդ հոդվածով նախատեսված նորմերի կատարման, այն ձգձգելով մինչև 2023թ. և նման պայմաններում ստեղծելով այնպիսի պայմաններ, որպիսով անցել են բոլոր ժամկետները, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ քննարկում է ունեցել պարտապանի փաստաբանի հետ, որ իբրև թե ըստ պարտապանի փաստաբանի պետք է ներկայացվեր ուղղակի նման հայցադիմում, միուս կողմին վախեցնելու նպատակով, իսկ այլ պայմաններում նման հայցադիմումի ներկայացման հիմք չկար:

Այնուհետև կարգապահական հանձնաժողովի նախագահը հարց ուղղեց ինչպես կառավարչին, այնպես էլ դիմումատուին, թե արդյոք վերջիններս հանձնաժողովին ունեն ներկայացնելու լրացուցիչ նյութեր կամ փաստաթղթեր, որին ի պատասխան թե կառավարիչը և թե դիմումատուն հայտնեցին, որ այլ հիմքեր ներկայացնելու չունեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն իսկ քննարկվել էին հանձնաժողովում առկա բոլոր նյութերը և հանգամանքները, ուստի Արման Տոնոյանին վերաբերվող կարգապահական լսումները համարվեցին ավարտված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախ հարկ է նշել, որ կարգապահական հանձնաժողովը պետք է ուսումնասիրի միայն ու միմիայն դիմումում նշված հանգամանքները, պարզի այդ դիմումում ընկած հանգամանքների հիմնավորվածությունը, ինչպես փաստաթղթային, այնպես էլ օրենսդրական և առկա իրավական ակտերի շրջանակներում:

Հանձնաժողովը ուսումնասիրելով վարույթում առկա ամբողջ նյութերը եկավ այն եզրակացության, որ քննարկման առարկա պետք է դարձնել միայն կառավարչի կողմից որպես „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, մասնավորապես՝ կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմքերն են՝ կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները խախտելը, ինչպես նաև „ՍԳԿԿ„ ԻԿԿ-ի 20.05.2023թ.-ին ընդհանուր ժողովի կողմից թիվ 1 որոշմամբ հաստատված, սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագիրքը, որի 1 գլխով սահմանվում են կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացքում իրականացվող պարտականությունները սահմանված խախտումները:

Քննարկման առարկա դարձնելով ներկայացված դիմումը հանձնաժողովը պարզեց նաև, որ դիմում բողոքը վերաբերելի էր „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված գործողություններին:Հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ ըստ նշված հոդվածի կառավարիչը նախ պարտավոր էր անկախ գնահատողի միջոցով պարզել ք. Երեւան, Կենտրոն, Ռոստոմի փողոց 51/2 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի շուկայական արժեքը, իսկ այնուհետև արժեքի մեծ տարբերության դեպքում, առանձին հայցադիմումով դիմեր առաջին ատյանի դատարան և Տիգրան Պետրոսի Աշխարյանից պահանջելու վաճառքի և գույքի իրացման ժամանակ գնահատողի կողմից նշված արժեքի տարբերությունը:Սակայն հարկ է նշել, որ նշված հանգամանքի վերաբերյալ, դիմումատուի կողմից, 06.02.2024թ.-ին արդեն իսկ դիմում բողոք է ներկայացվել ՀՀ „ՍԳԿԿ„ ԻԿԿ-ին, որի արդյունքում ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ և հանձնաժողովի կողմից նշված բողոքի հիման վրա, 26.04.2024թ.-ի արձանագրությամբ հանձնաժողովը կիրառել է նախազգուշացում:Բացի այդ հարկ է նշել, որ ըստ դիմումում նշված հանգամանքների, Աննա Սերյոժայի Քիշմիրյանի եւ Տիգրան Պետրոսի Աշխարյանի միջեւ 20.06.2018թ.-ին է կնքվել է անշարժ գույքի վաճառքի պայմանագիր, որով Աննա Քիշմիրյանը 8.000.000 /ութ միլիոն/ ՀՀ դրամով վաճառել է իրեն պատկանող ք. Երեւան, Ռոստոմի փող., 51/2 հասցեում գտնվող անշարժ գույքը:Այսինքն շուրջ 7 տարի առաջ:Իսկ դիմումը ԻԿԿ-է ներկայացվել 06.02.2024թ և 07.07.2025թ.-ին, այսինքն՝ լրացել են „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.3 հոդվածով սահմանված ժամկետները:

Բացի այդ նշված հանգամանքի վերաբերյալ հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ նշված հարցի կապակցությամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման նաև „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի հիմքով, այն է Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ առկա է նույն անձի դեմ նույն հիմքով հարուցված կարգապահական վարույթ կամ կարգապահական վարույթ չհարուցելու, կարճելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ սնանկության գործն ավարտված չլինելու պատճառով կարգապահական վարույթ չի հարուցվել, կամ հարուցված վարույթը կարճվել է:Իսկ ինչպես արդեն նշվեց սույն արձանագրությամբ, ՀՀ „ՍԳԿԿ„ ԻԿԿ-ի դիմտորդ խորհուրդի նախագահի անունով, Վարդգես Սաղոյանի կողմից, դեռ 06.02.2024թ.-ին ներկայացվել է նույնատիպ և նույնաբովանդակ դիմում-բողոք, որը քննարկվել է կարգապահական հանձնաժողովի կողմից և կայացվել է համապատասխան արձանագրություն:

Հանձնաժողովը անդրադառնալով այն հանգամանքին, որ կառավարչի կողմից չեն իրականցվել գործողություններ կապված պարտապանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում գտնվող հողատարածքի բաժնեմասի առանձնացման կամ տիրազուրկ ճաչաելու հարցին, պարզեց, որ Վարդգես Սաղոյանի կողմից, նույն 06.02.2024թ.-ին ներկայացված դիմումում, նշել է նաև վերը նշված՝ նույն հանգամանքը, որ նշված հողատարածքի մասով կառավարչի կողմից գործողություններ չեն կատարվել:Սակայն ինչպես արդեն նշվել է սույն արձանագրության մեջ, նշված դիմումը քննության առարկա է դարձվել կարգապահական հանձնաժողովի կողմից և կազմվել է համապատասխան արձանագրություն:Նման պայմաններում նշված հարցի կապակցությամբ կիրառելի են „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետով սահմանված պահանջները:

ՈՐՈՇՈՒՄ

Հաշվի առնելով սույն արձանագրության մեջ նշված հանգամանքները և օրենսդրական կարգավորումները, կարգապահական հանձնաժողովը որոշեց, Արման Տոնոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Ա.Աղամյան

Հ.Գևորգյան